

ք. Երևան

ՀՀ պաշտպանության նախարարությունը ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, որը գործում ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԷԼԱՐԿՈ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Ավետիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

2.1.8 Չննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

### 2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինել՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

### **2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

### **2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ << օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## **3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի գինը կազմում է առավելագույնը 17 000 000 /տասնյոթ միլիոն/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին (եռամսյակներում), բայց ոչ ուշ, քան 25.12.2025թ.:

Մատակարարված պահեստամասերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝  
ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxԲ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի պահեստամասերի մատակարարման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է՝ 86 399 355

ՆԳ-ն պահեստամասերի մատակարարման համար սահմանված առավելագույն միավորի գների հանրագումարն է.

1-ին չափաբաժնի՝ 86 399 355 ՀՀ դրամ:

ՄԳ/ՆԳ- բանաձևով սահմանված գործակից՝ 1

Ծ-ն առանձին տեսակի պահեստամասերի մատակարարման առավելագույն միավորի գինն է՝ ըստ հավելված 1-ի

Ք-ն մատակարարված պահեստամասերի քանակն է:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

#### **4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

#### **5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### **6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

[illegible]

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջի զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ԳՇ օպերատիվ գլխավոր վարչության ռազմատնտեսական պլանավորման վարչությունը (կառուցվածքային ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ սպառազինության և տեխնիկական ապահովման վարչությունը):

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

### ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ք. Երևան Բազրևանդի 5

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011144079

ՀՎՀՀ 02522157

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ



### ՎԱՃԱՌՈՂ

«ԷԼԱՐԿՈ» ՍՊԸ

ք. Սևան, Ստ. Շահումյան փող. Շ.2

«Ամերիկայում» ՓԲԸ

Հ/Հ 1570967044620100

ՀՎՀՀ 03021014

Տնօրեն



Վ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***  
**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

1-ին չափաբաժին, Չանագան պահեստամասեր («ՏԱՏԱ» ավտոմեքենաների ընթացիկ նորոգման պահեստամասեր)

| Հ/հ | Անվանում                                                                       | Տեխնիկական բնութագիր |
|-----|--------------------------------------------------------------------------------|----------------------|
| 1.  | ՇԱՐԺԻՉԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ 6BT 5.9 145HP BS2                                     | 206901000192         |
| 2.  | ՇԱՐԺԻՉԸ ԿԻՍԱՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ 6BT Euro2 BS/3                                    | 278601990117         |
| 3.  | ԳԼԱՆՆԵՐԻ ԲԼՈԿԻ ԳԼԽԻԿԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ                                         | 278601993707         |
| 4.  | ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՏՎԻՉ                                                              | 275454309901         |
| 5.  | ՃՆՇՄԱՆ ՏՎԻՉ                                                                    | 257654209930         |
| 6.  | ԱԴԱՊՏԵՐ (ՅՈՒՂԻ ՃՆՇՄԱՆ ՏՎԻՉԻ ՀԱՄԱՐ)                                             | 206918179901         |
| 7.  | ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՏՎԻՉ                                                              | 278615999816         |
| 8.  | ՎԱՌԵԼԻՔԻ ԲՃ ՊՈՄՊ (ՌՈՏՈՐԱՅԻՆ)                                                   | 460426334            |
| 9.  | ՎԱՌԵԼԻՔՄՈՒՂ ՊՈՄՊ                                                               | 278607990134         |
| 10. | ՎԱՌԵԼԻՔԻ ՑԱՆՑԱՅԻՆ ԶՏԻՉ BS1/2/3                                                 | 278609999920         |
| 11. | ՎԱՌԵԼԻՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԲՈՑԱՄՈՒՂԻ ԽՈՂՈՎԱԿ BS2/3                                  | 278607989901         |
| 12. | ՎԱՌԵԼԻՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԲՈՑԱՄՈՒՂԻ ԽՈՂՈՎԱԿ BS2/3                                  | 278607989902         |
| 13. | ԲՈՑԱՄՈՒՂ                                                                       | F002C8Z864           |
| 14. | ՎԱՌԵԼԻՔԻ ԶՏԻՉ                                                                  | 278607989952         |
| 15. | ՋՐԻ ԵՎ ՎԱՌԵԼԻՔԻ ՍԵՊԱՐԱՏՈՐ                                                      | 278607989953         |
| 16. | ՕԴԱՅԻՆ ԿՈՄՊՐԵՍՈՐ                                                               | 278613999915         |
| 17. | ՓՈՂՐԱԿ                                                                         | 278621999907         |
| 18. | ՏՈՒՐԲՈԿՈՄՊՐԵՍՈՐԻ ՄԻՋԱԴԻՐ                                                       | 278614999902         |
| 19. | ՏՈՒՐԲՈԿՈՄՊՐԵՍՈՐ                                                                | 278614990163         |
| 20. | ԳԵՆԵՐԱՏՈՐ 24 ՎՈԼՏ 45 ԱՄՊԵՐ BS1/2/3/4                                           | 278615990113         |
| 21. | ԳՈՏՈՒ ԶԳԻՉ                                                                     | 278615999902         |
| 22. | V-ՁԵՎ ԳՈՏԻ                                                                     | 278620999962         |
| 23. | ՄԵԿՆԱՐԿԻՉ 24 ՎՈԼՏ BS1/2/3/4                                                    | 278615999966         |
| 24. | ՅՈՒՂԻ ԶՏԻՉԻ ԷԼԵՄԵՆՏ SPINON BS1/2/3/4                                           | 278618139902         |
| 25. | ԹԵՐՄՈՍԱՏ 6BT BS1/2/3/4                                                         | 278620999925         |
| 26. | ԿՅՈՐԴՈՒՄ ՄԱԾՈՒՑԻԿ ՀՈՎՀԱՐ                                                       | 278620999821         |
| 27. | ԱՌԱՋՆԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ԶՏԻՉԻ ԷԼԵՄԵՆՏ                                                 | 278609139910         |
| 28. | ԿՅՈՐԴՄԱՆ ԿԱՓԱՐԻՉ ՏՐԱՄ. 352 BS1/2/3/4                                           | 275225400105         |
| 29. | ԿՅՈՐԴՄԱՆ ՍԿԱՎԱՌԱԿ ՏՐԱՄ. 352 BS1/2/3/4                                          | 275225200106         |
| 30. | ԿՅՈՐԴՄԱՆ ՍԿԱՎԱՌԱԿ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ ՏՐԱՄ.                                       | 275225200107         |
| 31. | ՓՈԽԱՆՑՄԱՆ ՏՈՒՓ G600-6-6.58 ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՁԱԽ ԿՈՂՄԻՑ BS2 | 269126010152         |
| 32. | ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓՈԽԱՆՑԱՏՈՒՓԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ BS1/2/3                                | 261428010101         |
| 33. | ՆԵՐԴԻՐ                                                                         | 261432103701         |

|     |                                                               |              |
|-----|---------------------------------------------------------------|--------------|
| 34. | ԱՌՋԵՎԻ ԿԱՄՐՋԱԿԸ (FA-104) ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ ԱՐԳԵԼԱԿՆԵՐՈՎ       | 272933050127 |
| 35. | ՁԱԽ ՇԱՐՋԱՔԵՐ ԼԻՍԵՌԸ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ                         | 261433750102 |
| 36. | ԱՌՋԵՎԻ ԿԱՄՐՋԱԿԻ ՇԱՐՋԱՔԵՐ ԼԻՍԵՌԸ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ ԱՋ          | 261433750101 |
| 37. | ՁԱԽ ՇԱՐՋԱՔԵՐ ԼԻՍԵՌԸ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ ՆԵՐՔԻՆ                  | 261433750110 |
| 38. | ԱՋ ՇԱՐՋԱՔԵՐ ԼԻՍԵՌԸ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ ՆԵՐՔԻՆ                   | 261433750107 |
| 39. | ՀՐԻՉԻ ՕՂԱԿ                                                    | 3223370217   |
| 40. | ԱԿԱՆՈՅ (ԿԵՆՏՐՈՆԱՎՈՐՈՂ) (ԱՌՋԵՎԻ ԿԱՄՐՋԱԿ) 2                     | 257433455102 |
| 41. | ԱՌՋԵՎԻ ԱՐԳԵԼԱԿՄԱՆ ԹՄԲԻԿ - ՏՐԱՄ. 410 X 160 2                   | 286742103701 |
| 42. | ԼԱՅՆԱԿԻ ՂԵԿԱՅԻՆ ՁԳԱՁՈՂ՝ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ                     | 261433800103 |
| 43. | ԱՌՋԵՎԻ ԱՐԳԵԼԱԿԻ ԿՈՃՂԱԿԸ՝ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ՝ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ        | 277842130115 |
| 44. | ՀԵՏԵՎԻ ԿԱՄՐՋԱԿԸ ԴԻՖԵՐԵՆՑԻԱԼԻ ԱՐԳԵԼԱՓԱԿՄԱՄԲ՝ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ | 273035000139 |
| 45. | ՀԵՏԵՎԻ ԿԱՄՐՋԱԿԻ ՁԱԽ ԼԻՍԵՌ                                     | 261435707903 |
| 46. | ՀԵՏԵՎԻ ԿԱՄՐՋԱԿԻ ԱՋ ԼԻՍԵՌ                                      | 261435707902 |
| 47. | ԿԱՐԴԱՆԱՅԻՆ ԼԻՍԵՌԸ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ (ԱՌՋԵՎԻ)                  | 215441100112 |
| 48. | ԿԱՐԴԱՆԱՅԻՆ ՀՈԴԱԿԱՊԸ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ<br>BS1/2/3/4 1          | 257341120109 |
| 49. | ԼԱՐԱԿԱԶՄ-ԿԱՐԴԱՆԱՅԻՆ ՀՈԴԱԿԱՊԸ<br>ՍԵՎԵՌԻՉ ՕՂԱԿՈՎ BS1/2/3/4      | 885441011210 |
| 50. | ՊԱՇՏՊԱՆԻՉ ԹԱՍԱԿ                                               | 3284110097   |
| 51. | ԱՌՋԵՎԻ ԿԱՐԴԱՆԱՅԻՆ ԼԻՍԵՌ                                       | 219841100101 |
| 52. | ԱՌՋԵՎԻ ԿԱՐԴԱՆԱՅԻՆ ԼԻՍԵՌ                                       | 219841100102 |
| 53. | ԿԱՐԴԱՆԱՅԻՆ ՀՈԴԱԿԱՊԻ ԿՑԱՇՈՒՐԹԸ                                 | 3124111111   |
| 54. | ԱՌՋԵՎԻ ԲԱՑԱԿԻ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ՁԱԽ                                  | 286742100173 |
| 55. | ԱՌՋԵՎԻ ԲԱՑԱԿԻ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԱՋ                                   | 286742100174 |
| 56. | ԶՍՊԱՆԱԿԱՎՈՐ ԱՐԳԵԼԱԿԻ ՇԱՐՋԱՔԵՐ (T-12/12) BS1/2/3/4             | 270742300101 |
| 57. | ԿՐԿՆԱԿՐ ԱՐԳԵԼԱԿՄԱՆ ՓԱԿԱՆ VOSS                                 | 264143700147 |
| 58. | ԱՍՏԻՃԱՆԱՆՇՎԱԾ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՌՔԻ ՓԱԿԱՆ BS1/2/3/4                | 263243700188 |
| 59. | ՉՈՐԱՅՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԲԼՈԿ                                      | 264143700163 |
| 60. | Չորացուցիչի բարձրիչ                                           | 216343709919 |
| 61. | ՄԻԱԿՑՈՂ ՁԳԱՁՈՂ                                                | 219846000102 |
| 62. | ԿԱՐԴԱՆԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ                        | 206746600105 |
| 63. | ՆԵՐԾԾՈՂ ՓՈՂՐԱԿԸ (ՀԻԴՐԱՎԼԻԿ ԲԱՔԻՑ ԴԵՊԻ ՊՈՄՊ)                   | 215446800118 |
| 64. | ՃՆՇՈՒՄԱՅԻՆ ՓՈՂՐԱԿ (ՊՈՄՊԻՑ ԴԵՊԻ ՂԵԿԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՏՈՒՓ) 1      | 215446800119 |
| 65. | ՎԵՐԱԴԱՐՁԻ ՓՈՂՐԱԿ (ՂԵԿԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՏՈՒՓԻՑ ԴԵՊԻ ԲԱՔ) 1        | 215446800120 |
| 66. | ՀԻԴՐՈՈՒԺԵՂԱՐԱՐՈՎ ՂԵԿԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՏՈՒՓ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ     | 257346210116 |
| 67. | ՅՈՒՂԻ ԶՏԻՉԻ ՔԱՐԹՐԻՋ BS1/2/3/4                                 | 257344400128 |
| 68. | ՌԱԴԻԱՏՈՐ ԻՆՏԵՐՔՈՒԼԵՐՈՎ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ                      | 206950100203 |
| 69. | ՌԱԴԻԱՏՈՐԸ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ                                   | 206950100253 |
| 70. | ԽՈՂՈՎԱԿ (ԻՆՏԵՐԿՈՒԼԵՐԻՑ ԴԵՊԻ ՇԱՐՋԻՉ)                           | 206914603820 |

|      |                                                                         |              |
|------|-------------------------------------------------------------------------|--------------|
| 71.  | ԽՈՂՈՎԱԿ ՏՈՒՐԲՈՎՈՄՊՐԵՍՈՐԻՑ ԴԵՊԻ ԻՆՏԵՐԿՈՆԷՐ                               | 206914603819 |
| 72.  | ՄԱԼՈՒԽ VE ՄԱՐՏԿՈՑ                                                       | 216054100105 |
| 73.  | ՄԱԼՈՒԽ VE ՄԱՐՏԿՈՑԻՑ ԴԵՊԻ ՄԵԿՆԱՐԿԻԶ                                      | 216054100106 |
| 74.  | ՄԱԼՈՒԽ -VE ՄԱՐՏԿՈՑ                                                      | 216054110101 |
| 75.  | ՄԱԼՈՒԽ -VE ՄԱՐՏԿՈՑԻՑ ԴԵՊԻ ՄԵԿՆԱՐԿԻԶ                                     | 216054110102 |
| 76.  | ՄԱՐՏԿՈՑԻ ՀԱՏԻԶ BS1/2/3/4                                                | 215754209998 |
| 77.  | ԿԼԱԿՍՈՆ 24 Վ ԱՌԱՆՑ ՃՆՇՄԱՆ ԿՈՆԴԵՆՍԱՏՈՐԻ BS1/2/3/4                        | 257354249910 |
| 78.  | ԿՈՂՄՆԱՅԻՆ ՅՈՒՅԶԱՅԻՆ ԼԱՄՊ 24B ՁԱԽ                                        | 264154440135 |
| 79.  | ԿՈՂՄՆԱՅԻՆ ՅՈՒՅԶԱՅԻՆ ԼԱՄՊ 24B ԱՋ                                         | 264154440134 |
| 80.  | ԱՌՋԵՎԻ ԼՈՒՍԱՐՁԱԿ 24B ԱՋ՝ ՁԱԽ ՂԵԿ. ՀԱՄԱՐ SU                              | 264154440121 |
| 81.  | ԱՌՋԵՎԻ ԼՈՒՍԱՐՁԱԿ 24B ՁԱԽ՝ ԱՋ ՂԵԿ. ՀԱՄԱՐ SU                              | 264154400131 |
| 82.  | ԱՌՋԵՎԻ ՁԱԽ ԼՈՒՍԱՐՁԱԿԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԻԶ                                      | 215488500103 |
| 83.  | ԱՌՋԵՎԻ ԱՋ ԼՈՒՍԱՐՁԱԿԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԻԶ                                       | 215488500104 |
| 84.  | ՁԱԽ ՇՐՋԱԴԱՐՁԻ ՅՈՒՅԻԶ 24Վ                                                | 270754440115 |
| 85.  | ԱՋ ՇՐՋԱԴԱՐՁԻ ՅՈՒՅԻԶ 24Վ                                                 | 270754440114 |
| 86.  | ՀԵՏԵՎԻ ՁԱԽ ԳԱՔԱՐԻՏԱՅԻՆ ԼՈՒՅՍԵՐ ԼԱՄՊԵՐՈՎ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ               | 261854440107 |
| 87.  | ՀԵՏԵՎԻ ԱՋ ԳԱՔԱՐԻՏԱՅԻՆ ԼՈՒՅՍԵՐ ԼԱՄՊԵՐՈՎ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ                | 261854440108 |
| 88.  | ՂԵԿԱՍՅՈՒՆ ՎԱՌՈՅՔԻ ԿՈՂՊԵՔՈՎ                                              | 264154500106 |
| 89.  | ԿԱՆԳ-ԱՋԴԱՆՇԱՆԻ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՏԻԶ                                      | 257454509953 |
| 90.  | ՍԱՐՔԱՎԱՀԱՆԱԿ ԵՎ ՍԽԵՄԱ                                                   | 215454908201 |
| 91.  | ԱՐԱԳԱԶԱՓ1:0.825(61ԹՎԱՆՇ.)                                               | 265754209952 |
| 92.  | ԱՐԱԳԱԶԱՓԻ ՄԱԼՈՒԽ -JIS -LG 4300 ՄՄ ՄԵԿՈՒՍԻԶ ԱԿԱՆՈՅՈՎ                     | 215454209901 |
| 93.  | ՀԵՏԵՎԻ ՏԵՍԱԴԱՇՏԻ ՀԱՅԵԼԻ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ (ԱՐՏԱՔԻՆ ԱՋ)                  | 264181100114 |
| 94.  | ՀԵՏԵՎԻ ՏԵՍԱԴԱՇՏԻ ՀԱՅԵԼԻ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ (ԱՐՏԱՔԻՆ ՁԱԽ)                 | 264181100113 |
| 95.  | ԱՊԱԿԵՄԱՔՐԻԶԻ ՇԱՐԺԻԶԸ՝ ԿԱԼՈՒՆԱԿՈՎ 24B ՁԱԽ ՂԵԿ. HI-POWER                  | 264382400109 |
| 96.  | ԱՊԱԿԵՄԱՔՐԻԶԻ ԽՈՁԱՆԱԿ                                                    | 264382400104 |
| 97.  | ԳԼԱՆՆԵՐԻ ԲԼՈԿԻ ԳԼԽԻԿԸ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ ԱՌԱՆՑ ՑԱՅՏՄԱՆ ԵՎ ՓԱԿՎԱԾՔԻ BS3/4 | 278901990229 |
| 98.  | ԲՃ ՊՈՄՊԻ ԿԱԼՈՒՆԱԿ (ԹԵՐԹԱՅԻՆ ՄԵՏԱՂ)                                      | 278907123301 |
| 99.  | ՏՈՒՐԲՈՎՈՄՊՐԵՍՈՐԸ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ                                      | 278914510135 |
| 100. | ՅՈՒՂԻ ՀՈՎԱՅՈՒՅԻԶԻԶ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ                                    | 278918170101 |
| 101. | ՕԴԻ ԶՏԻԶԸ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ - ԵՎՐՈ 5                                    | 278909130191 |
| 102. | SIMAF ՏՎԻԶԸ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ                                           | 278915400111 |
| 103. | ՃԿԱՓՈՂԸ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ, ՕԴԻ ԶՏԻԶԻ ԵԼՔԸ                               | 278909130222 |
| 104. | ԻՆՏԵԿՈՆԷՐԸ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ (E-V) XENON-BEHR                           | 278914600130 |
| 105. | ՕԴԻ ԶՏԻԶԻ ՏԱՐՐ BS3/4/6                                                  | 278909130106 |
| 106. | ՓՈԿ 6PK 1155EPDM (ԳԵՆԵՐԱՏՈՐ+ԺԱՄ) (GATES) BS3/4                          | 278923116302 |
| 107. | ՀԻԴՐՈՈՒԺԵՂԱՐԱՐԻ ՊՈՄՊԸ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ                                 | 550246600167 |

|      |                                                                          |              |
|------|--------------------------------------------------------------------------|--------------|
| 108. | ՓՈԿ. ՀԻԴՐՈՈՒԹԵՂԱՐԱՐԻ ՊՈՍՊ                                                | 278923116307 |
| 109. | ԿՅՈՐԴՄԱՆ ԼՐԱԿԱԶՄԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ<br>ՏՐԱՄ. 260 SAC BS3/4/6              | 272425000234 |
| 110. | ՓՈԽԱՆՑԱՏՈՒՓԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ                                            | 581126010113 |
| 111. | ԿՅՈՐԴՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԼԱՆԸ՝ ՃԿԱՓՈՂՈՎ                                         | 550229100176 |
| 112. | ԱՄՈՐՏԻԶԱՏՈՐԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ, ԱՌՋԵՎԻ                                    | 550232300103 |
| 113. | ԱՄՈՐՏԻԶԱՏՈՐԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ, ՀԵՏԵՎԻ                                    | 550232600101 |
| 114. | ՌԵՏԻՆԵ ԱՎԱՆՈՅԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ                                          | 289832400138 |
| 115. | ԱՋ ԱՆՎԻ ԴԱՐՁՅԱԿԸ ԵՎ ԼԻՍԵՌԸ ՀԱՎԱՔԱԾ<br>ՎԻՃԱԿՈՒՄ (2015528-2)               | 285933800114 |
| 116. | ԱՋ ԲՈՒՈՒՆՑՔԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ (2006512-2)                                | 285933800108 |
| 117. | ՍԿԱՎԱՌԱԿԱՅԻՆ ԱՐԳԵԼԱԿ                                                     | 287042103705 |
| 118. | ԻԼ - ԱՆՎԻ ԱՌԱՆՑՔԱԿԱԼ FIN (2006521)                                       | 285933807901 |
| 119. | ԱՋ ԼԻՍԵՌԸ ԵՎ ՄԻԱԿՑՈՒՄԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ (2006562)                        | 285933750101 |
| 120. | ՁԱԽ ԼԻՍԵՌԸ ԵՎ ՄԻԱԿՑՈՒՄԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ (2006563)                       | 285933750102 |
| 121. | ՁԱԽ ԲՈՒՈՒՆՑՔԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ (2006511-2)                               | 285933800110 |
| 122. | ՁԱԽ ԱՆՎԻ ԴԱՐՁՅԱԿԸ ԵՎ ԼԻՍԵՌԸ ՀԱՎԱՔԱԾ<br>ՎԻՃԱԿՈՒՄ (2015529-2)              | 285933800115 |
| 123. | ՀԵՏԵՎԻ ԿԱՄՐՁԱԿԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ                                         | 266335050167 |
| 124. | ԼԻՍԵՌԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ/ M-LOCKER<br>ՀԱԿԱՐԳԵԼԱՓԱԿՄԱՆ ԱՐԳԵԼԱԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ | 266335700147 |
| 125. | ՀԵՏԵՎԻ ՁԱԽ ԱՐԳԵԼԱԿԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ                                     | 289542300123 |
| 126. | ՀԵՏԵՎԻ ԱՋ ԱՐԳԵԼԱԿԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ                                      | 289542300124 |
| 127. | ԿՈՃՂԱԿՆԵՐԻ ԼՐԱԿԱԶՄԸ ԼԾԱԿՈՎ ՎՐԱԴԻՐՈՎ Ս/Վ                                  | 289542300120 |
| 128. | ԿԱՐԴԱՆԱՅԻՆ ԼԻՍԵՌԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ                                       | 550241100109 |
| 129. | ԿԱՐԴԱՆԱՅԻՆ ՀՈԴԱԿԱՊԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ                                          | 540741100102 |
| 130. | ԿՅԱՇՈՒՐԹԱՎՈՐ ԵՐԿԺԱՆԻ                                                     | 281841100130 |
| 131. | ԱՌՋԵՎԻ ԿԱՐԴԱՆԱՅԻՆ ԼԻՍԵՌԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ                                | 287041110131 |
| 132. | ԿԱՅԱՄԱՆ ԱՐԳԵԼԱԿԻ ՄԱԼՈՒԽԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ                                | 550242700108 |
| 133. | ԵՆԹԱԿԻՐԸ ԵՐԿՏԱԿԱԾ ՄԽՈՅՈՎ (ՁԱԽ) ՀԱՎԱՔԱԾ<br>ՎԻՃԱԿՈՒՄ BS1/3/4/6             | 289642100106 |
| 134. | ԵՆԹԱԿԻՐԸ ԵՐԿՏԱԿԱԾ ՄԽՈՅՈՎ (ԱՋ) ՀԱՎԱՔԱԾ<br>ՎԻՃԱԿՈՒՄ BS1/3/4/6              | 289642100107 |
| 135. | ԱՌՋԵՎԻ BS1/3/4/6 ԿՈՃՂԱԿՆԵՐԻ ԼՐԱԿԱԶՄ                                      | 287042100120 |
| 136. | ԱՐԳԵԼԱԿԻ ԽՈՂՈՎԱԿ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ, ԱՌՋԵՎԻ                                | 287042800171 |
| 137. | ԱՐԳԵԼԱԿԻ ԽՈՂՈՎԱԿ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ, ՀԵՏԵՎԻ                                | 550243800200 |
| 138. | ՀԵՏԵՎԻ ԱՆՎԻ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՏՎԻՉ MS BOSCH                                     | 289454209916 |
| 139. | ԱՆՎԻ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՏՎԻՉ                                                     | 287054209902 |
| 140. | ՂԵԿԱՅԻՆ ՍՅՈՒՆԱԿԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ                                        | 550246100108 |
| 141. | ՁՈՂԱՅԻՆ ԺԱՆԱՆԻՎԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ, ՀԻԴՐՈՈՒԹԵՂԱՐԱՐ                        | 550246600183 |
| 142. | ՎԱՌԵԼԻՔԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՏՎԻՉ 70L EURO-V AIR BAG.<br>(ԱՌԱՋԱՐԿԻ ԳԾԱԳԻՐ)         | 550254201601 |
| 143. | ՑԱՆՑԱՎՈՐ ԶՏԻՉԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ                                          | 550247100157 |
| 144. | ՌԱԴԻՍՏՈՐԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ՝ ԴԱՏԱՐԿՄԱՆ ԽՅԱՆՈՎ BS3/4                       | 278950100170 |

|      |                                                                         |              |
|------|-------------------------------------------------------------------------|--------------|
| 145. | ՊԱՏՅԱՆԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ՝ ՕԴԱՓՈԽԻՉՈՎ ԵՎ ՇԱՐԺԻՉՈՎ                        | 278950100206 |
| 146. | ԾԿԱՓՈՂ. ՌԱԴԻԱՏՈՐԻՑ ԴԵՊԻ ԹԵՐՄՈՍՏԱՏ                                       | 278950105891 |
| 147. | ԾԿԱՓՈՂ (ՌԱԴԻԱՏՈՐԻՑ ԴԵՊԻ ՕԴԱՓՈԽԻՉ ԽՈՂՈՎԱԿ)                               | 278950105884 |
| 148. | ՀԱՎԱՔՎԱԾՔՈՒՄ ՁԱԽ ԼՈՒՍԱՐՁԱԿԸ ՇՐՋԱԴԱՐՁԻ ՑՈՒՑԻՉՈՎ,<br>ՁԱԽ ՂԵԿ BS3/4        | 289454400101 |
| 149. | ԱՋ ԼՈՒՍԱՐՁԱԿ՝ ՇՐՋԱԴԱՐՁԻ ՑՈՒՑԻՉՈՎ, ՁԱԽ ՂԵԿ BS3/4                         | 289454400102 |
| 150. | ՀԵՏԵՎԻ ԳԱՔԱՐԻՏԱՅԻՆ ԼՈՒՑԱԵՐԸ ՀԱՎԱՔՎԱԾ<br>ՎԻՃԱԿՈՒՄ - ՁԱԽ                  | 289454400103 |
| 151. | ՀԵՏԵՎԻ ԼԱՊՏԵՐԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ ԱՋ ԿՈՂՄԱՅԻՆ BS3/4                       | 289454400104 |
| 152. | ԼՈՒՍԱՐՁԱԿՆԵՐԻ ՇՐՋԱԴԱՐՁԱՅԻՆ ՓՈԽԱՐԿԻՉԸ<br>ՀԱԿԱՄԱՌԱԽՈՒՂԱՅԻՆ ԼՈՒՍԱՐՁԱԿՆԵՐՈՎ | 550254509903 |
| 153. | ԱՊԱՀՈՎԻՉ, ԲՈՒՏ 80A ISO8820                                              | 62123225177  |
| 154. | ԱՊԱՀՈՎԻՉ PAL 40 A ISO8820                                               | 62123225029  |
| 155. | ԱՊԱՀՈՎԻՉ PAL 60 A ISO8820                                               | 62123225045  |
| 156. | MEGA ԱՊԱՀՈՎԻՉՆԵՐԻ ԲԼՈԿԻ ԱՄՐԱԿՈՒՄԸ ՄԱՐՏԿՈՑԻՆ<br>2P BASE125A, 500 Ա       | 550254100110 |
| 157. | ԹԱՓՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԼՈԿ H4                                                | 550254209918 |
| 158. | ՀՈՂՄԱՊԱԿԻ BS1/3/4                                                       | 289467100101 |
| 159. | ՀԵՏԵՎԻ ԱՊԱԿԻ ՏԱՔԱՅՄԱՐ                                                   | 289467802302 |
| 160. | ԱՊԱԿԵՄԱՔՐԻՉԻ ՇԱՐԺԻՉ W/RIS+THER C/O MS, ՁԱԽ ՂԵԿ                          | 265482400161 |
| 161. | ՋՕՕ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈԼՈՐԻՉԸ ՀԱՎԱՔԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ<br>(ԷԼԵԿՏՐԱԿԱՆ) RS, ՁԱԽ ՂԵԿ     | 289483400353 |
